



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ԱՐԶՈՒՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Արջուտ, 093 19 91 34 arjut.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 20-Ա

**ԱՐԶՈՒՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն համադրված, վարձակալության իրավունքով Տիգրան Թորոսյանին տրամադրված 06-019-0105-0151 ծածկագրով 0,32574 հա մակերեսով ջրային ֆոնդի հողամասը ավտոպահեստամասերի արտադրություն կազմակերպելու նպատակով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:

2.Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

Կողմ - 4

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՎԱՐՉԱԿԱՆ ՄԿՐՏՅԱՆ